Գէորգ Բաղդիշեան[1], Հայոց Մեծ եղեռնը մեր յուշերու եւ իրականութեան մէջ: Մուսալեռցի պապս[2], Սրբոց Յակոբեանց տպարան, Երուսաղէմ, 2001, 82 էջ *:

DOI: 10.52063/25792652-2023.1.16-249



Այս գիրքը գրած եմ զիս ճանչցող սփիւռքահայերուն խնդրանքով եւ յորդորով: Այս գիրքին մէջ գրեթէ բացառապէս ե՛ս եմ հայոց Մեծ Եղեռնի, զանազան այլ խնդիրներուն մասին իմ խոհերով, գնահատումներով բազմաթիւ կողմերէ դիտելով խնդրոյ առարկայ նիւթը:

Գէորգ Բաղդիշեան

Գէորգ Բաղդիշեանի գրախօսուող աշխատանքն սփիւռքահայերի շրջանում Հայոց Ցեղասպանութեան թեմային առնչուող՝ իրեն յղած հարցադրումների ամփոփ եւ ինքնատիպ շարադրանքն է:

«Հայոց Մեծ եղեռնը մեր յուշերու եւ իրականութեան մէջ: Մուսալեռցի պապս» գրքում Բաղդիշեանն առանձնացրել է խնդրայարոյց այն հարցերը, որոնք լուսաբանելու կարիք ունեն: Կարեւոր է նկատել, որ հեղինակը, իւրաքանչիւր թեմային առանձին-առանձին անդրադարձ կատարելով, գիտական գրականութեան յենքի վրայ հակիրճ ու որոշակի բնութագրել է փաստը՝ միաժամանակ ընթերցողին չծանրաբեռնելով մեծածաւալ տեղեկութեամբ:

Հայոց Ցեղասպանութեան թեմայի վերաբերեալ հարցադրումները, որոնք զետեղուած են գրքոյկում, հարկ ենք համարում ներկայացնել ամբողջութեամբ, քանի որ գրախօսութեան համար ընտրուած այս առանձնայատուկ աշխատանքի վրայ ընթերցողի ուշադրութեան բեւեռումը հնարաւոր ենք համարում հենց ներքոշարադրեալ խորագրերի միջոցով (իհարկէ, մէկ գրախօսութեան շրջանակում հնարաւոր չէր անդրադառնալ բոլորին):

Ստորեւ ներկայացնում ենք խորագրերն ու ենթախորագրերը՝ «'Եղեռն' բառին հին իմաստներն ու նոր բովանդակութիւնը», «'Ցեղասպանութիւն' հասկացութիւնը, անոր իրաւաբանական ձեւակերպումը», «Գաղթն ու կոտորածները», «Հայոց Մեծ եղեռնի նախապայմաններ, մարդկային եղերանպաստ կամ եղեռնածին բնավորութեան գիծեր», «Օսմանեան Կայսրութեան ծնունդը եւ անոր քաղաքականութեան գլխաւոր գիծը», «Հայոց Մեծ եղեռնը» (Ա. «Արեւմտահայութեան եղեռնի նախապատրաստումը եւ իրականացումը»), «Արեւելահայութիւնը եղեռնագործուելու վտանգին առջեւ», «Արդեօք կրնա՞ր կանխուիլ Հայոց Մեծ եղեռնը», «'Սփիւռք' բառին ամրակայումը հայոց լեզուի եւ գիտակցութեան մէջ», «Թուրքիա հայոց նկատմամբ իրագործա՞ծ է Ցեղասպանութիւն, թէ՞ ոչ», «Թուրքիա հայոց նկատմամբ իրագործա՛ծ է

---

[1] Գրաբարագէտ, հայոց լեզուի պատմութեան մասնագէտ, դոկտոր, պրոֆեսոր Գէորգ Բաղդիշեանը ծնուել է 1939-ին Մուսան Լեռան Հաճի Հապիպլի գիւղում: Գիտամանկավարժական գործունէութիւնը ծաւալել է 1984-ից Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատութեան, Երուսաղէմի ժառանգաւորաց, Գահիրէի Նուպարեան եւ Գալուստեան ազգային վարժարաններում: Շուրջ մէկ տասնեակից աւել գրքերի եւ յօդուածների հեղինակ է:

[2] Հայոց Մեծ Եղեռնը մեր յուշերու եւ իրականութեան մէջ գրքում պրոֆեսոր Բաղդիշեանը կից ներկայացրել է «Մուսալեռցի պապս» հեղինակային իրապատումը, որին այս գրախօսութեան մեջ չենք անդրադարձել (Գէորգ Բաղդիշեան, Մուսալեռցի Պապս, Երեւան, հեղինակային, 2017):

* Գրախոսությունը ներկայացվել է 15.02.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2023թ.:

Ցեղասպանութիւն» (Ա. «Հայը, հայ պետականութիւնն ու Հայոց Ցեղասպանութեան ընդունումը», Բ. «Հայոց Ցեղասպանութեան ընդունումը կարգ մը օտար պետութիւններու կողմէ»), «Սուտն ու կեղծարարութիւնը Թուրքիոյ եւ թրքական ու թրքամէտ մտաւորականութեան բնաւորութիւն», «Հայոց Ցեղասպանութիւն չէ՛ եղած», «Թուրքիա սիրաշահելու քաղաքականութիւն» (Ա. «Թուրքիոյ քմահաճոյքները բաւարարելու պատճառները», Բ. «Հայոց Ցեղասպանութիւնը՝ ընդունուած միայն խորհրդարանային բանաձեւով մը», Գ. «Հայոց Ցեղասպանութիւնը չընդունելու համար խուսանաւումներ»), «Մերժե՞լ դիւանագիտութիւնը, թէ՞ սորվիլ դիւանագիտութիւն», «Ինչո՞ւ պէտք է պատժուին ցեղասպանութեան հեղինակները», «Հայոց նահանջը Հայոց ճերմակ եղեռն է», «Հա՛յ ժողովուրդ, քու փրկութիւնդ քու հաւաքական ուժին մէջ է», «Ինչո՞ւ կը հանդիսադրենք Հայոց Մեծ եղեռնի անմեղ զոհերուն յիշատակը»:

Պատահական չէ, որ Բաղդիշեանը շարադրանքը սկսում է հենց «Եղեռն» եւ «Ցեղասպանութիւն» բառեզրերի ստուգաբանութեամբ: Ցեղասպանագիտութեան մէջ դրանց ճիշտ գործածութիւնը կարեւոր նշանակութիւն ունի: «Ցեղասպանութիւն» բառեզրի միջազգային-իրաւական որակման վերաբերեալ առկայ տեսական եւ գործնական հետաքրքրութիւնը նպաստել էինչպէս հետազօտողների, այնպէս էլ միջազգային հանրութեան ուշադրութեան կենտրոնացմանը նախկինում կատարուած միջազգային յանցագործութիւների վրայ: Կարեւորուել են պետութիւնների պատասխանատուութեան եւ միջազգային յանցագործութիւնների կանխարգելման ու պատժի հիմնախնդիրները, հրամայական դարձել պետութիւնների հանցաւոր գործողութիւների իրաւական ճիշտ որակումը:

Անդրադառնալով «Եղեռն» եզրի ստուգաբանութեան, հին իմաստներին ու նոր բովանդակութեանը՝ հեղինակը համոզմունք է արտայայտում, թէ այն գործածուել է նախագրային շրջանի հայերէնում:

Ներկայացնելով եզրի բառարանային իմաստները՝ չարիք, վնաս, փորձանք, ոճիր, Բաղդիշեանը նշում է. «*Մինչեւ հայոց մեծ ցեղասպանութիւնը Եղեռն բառին գործածութիւնները, այս բառին համար յատկապէս հին բառարաններուն տուած բացատրութիւնները «ցեղասպանութիւն», «սերնդասպանութիւն» (Genocide) իմաստները չեն արտայայտեր, իմաստներ, որոնք այսօր ամրակայուած են, կան մասնաւորապէս 20-րդ դարուն ցեղասպանութիւն տեսած հայ ժողովուրդին գիտակցութեան մէջ՝ որպէս բառիս առաջին եւ միակ իմաստ*» (Բաղդիշեան 1):

Հայոց Ցեղասպանութեան պատմութիւնն ուսումնասիրելիս Բաղդիշեանն ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքի վրայ, որ հայոց պատմութեան ընթացքն իր դժուարութիւններով մեծապէս ազդել է նաեւ հայ ժողովրդի «եղեռնածին» բնաւորութեան գծերի վրայ: Հետաքրքիր է հեղինակի հետեւեալ մեկնաբանութիւնը. «*Այդքան ջարդ ու գաղթ, վիշտ ու տառապանք, զրկանք տեսած ժողովուրդի մը մէջ ի՞նչպէս կրնար ըլլալ, որ որոշ հայեր տեղի չտային բնաւորութեան կարգ մը յոռի գիծերու՝ անմիաբանութեան, մատնութեան եւ այլն: Այսօր ո՛չ ոք կրնայ ստոյգ ըսել, թէ ո՞վ, ո՞ր ժողովուրդը եւ ե՞րբ սերմանած է հայերուն մէջ օտարածին այդ չար սերմերը, որոնց դառն պտուղը շատ յաճախ ճաշակած է ողջ հայ ժողովուրդը*» (Բաղդիշեան 8):

Բաղդիշեանը իւրաքնչիւր թեմայի անդրադառնալիս քննել, համեմատել, ապա ընդհանուրից անցել է մասնաւորի՝ պարզ օրինակների մատուցմամբ: Հեղինակը, խորապէս ըմբռնելով պատմական իրողութիւնները, հակիրճ, սակայն ամբողջական ու սպառիչ պատասխան է տուել խնդրոյ առարկայ թեմայի յաճախակի տրուող հարցերին: Հետաքրքիր են յատկապէս Օսմանեան պետութեան պատմութեան, Հայոց Ցեղասպանութեան ծրագրման, նախապատրաստման եւ իրագործման, աշխարհի անտարբերութեան վերաբերեալ Բաղդիշեանի մեկնաբանութիւնները:

Հետազօտելով ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ օսմանեան պետութեան վարած քաղաքականութիւնը՝ պրոֆեսորը յանգում է հետեւեալ եզրակացութեան. «*Օսմանեան կայսրութիւնն իր ձեւաւորման ու գոյութեան առաջին իսկ մէկ օրէն մինչեւ այսօր երազած է եւ կ'երազէ «իր երկիրը» տեսնել միայն թուրքերով, իսկ Թուրքիոյ տարածքին վրայ ապրող ազգային փոքրամասնութիւնները՝ թրքացած կամ ֆիզիքապէս ոչնչացուած... Թուրքիոյ համար, համաձայն իր վայրենի բնազդին, Հայոց Հարցը լուծել՝ կը նշանակէր հայը բնաջնջել, յունական հարցը կարգաւորել՝ կը նշանակէր յոյնը կոտորել, այսօրուան քիւրտերուն խնդիրը լմնցնել՝ կը նշանակէ քիւրտերը ջարդել*» (Բաղդիշեան 10-11):

Անդրադառնալով արեւմտահայութեան Եղեռնի նախապատրաստմանն ու իրականացմանը՝ հեղինակը գրում է. «... *Իրականութիւնն այն էր, որ եւրոպականացած կամ գոնէ ինքզինք իբրեւ այդպիսին ներկայացնող թուրքը նո՛յն թուրքն էր՝ առաւե՛լ գէշ, առաւե՛լ վայրագ: Կարմիր կովը կաշին կրնա՞յ փոխել... Թուրքին այս որակին հետ ալ յոյս կապած հայ ժողովուրդին երազանքը՝ ստեղծել ինքնավար Արեւմտահայաստան մը, այդպէս ալ երազանք կը մնայ*» (Բաղդիշեան 12):

Բաղդիշեանի համոզմամբ՝ վիճակագրական որեւէ տուեալ ի զօրու չէ հայ ժողովրդի կորուստների պատկերը ներկայացնել. «... *Ի՞նչ արժէր եւ այսօր ալ արժէ մեզի եւ մարդկութեան համար միայն Մեծն Կոմիտասը, միայն մէ՛կ հայ մայրը, ծնած ու ծնուելիք միայն մէ՛կ հայ մանուկը... Իսկ ինչքա՜ն մտաւորականներ, մայրեր, մանուկներ անշնչացան, որքա՜ն ընտանիքներ, աստղեր պիտի փայլատակէին, որ ծնած խամրեցան կամ լոյս աշխարհ չեկան...*» (Բաղդիշեան 14):

Ցեղասպանութիւնից փրկուած հարիւր-հազարաւոր հայեր ցրուել էին աշխարհով մէկ՝ մի կողմից աւելացնելով վաղուց գոյութիւն ունեցող գաղթավայրերի հայութեան թուաքանակը, իսկ միւս կողմից՝ ստեղծելով նոր գաղթավայրեր: Այդ ժամանակներից գաղթաշխարհը սկսեց կերպափոխուել՝ գաղթավայրային իրականութիւնից անցում կատարելով դէպի աշխարհայեացքային եւ կազմակերպական առումներով որակապէս տարբերուող նոր մակարդակ՝ «սփիւռքեան ձեւաչափ» (Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնները 10):

Ապրելով եւ աշխատելով նաեւ Սփիւռքում՝ Բաղդիշեանը մեծապէս կարեւորում է ե՛ւ Սփիւռքի դերակատարութիւնը, ե՛ւ անկախ հայրենիքի գոյութիւնը. «*Հայաստանի խորհրդային շրջանի ողջ ընթացքին հայոց դատի, պահանջատիրութեան ծանր, բայց պատուաբեր ու կարեւոր գործը պատուով ու պատասխանատուութեամբ իր ուսերուն կրած է (այսօր ալ իրեն հասանելիքին չափով կը կրէ) հայ Սփիւռքը: Կը պակսէր միայն ազատ ու անկախ Հայրենիքին գոյութիւնը, փաստ, որ օդ ու ջուրի նման անհրաժեշտ էր: Այսօր մեր ժողովրդն ունի՛ այդ ազատ ու անկախ Հայաստանը՝ մեր ժողովուրդին դարաւոր երազանքներուն մարմնացումը...*» (Բաղդիշեան 24):

Ուշագրաւ են յատկապէս հեղինակի՝ ոչ միայն պատմութեան, այլեւ հոգեբանութեան լոյսի ներքոյ դիտարկումները: Բաղդիշեանը համոզուած նշում է, որ պետութիւններն էլ կարող են եւ ունեն բնաւորութիւն. «*Պետութիւն մը կրնա՞յ բնաւորութիւն ունենալ: Անշու՛շտ: Ինչպէս մարդը, այնպէս ալ պետութիւնը կը բնութագրուի իր գործերով եւ գործելակերպով... Թուրքիոյ տարածքն այլ ժողովուրդներու հայրենիքներն են՝ յափշտակուած: Թուրքի դարաւոր մտածողութեամբ՝ ուրիշէն գրաւած իւրաքանչիւր թիզ հողն իր հայրենիքն է, իսկ անիրաւուած ժողովուրդները՝ թուրքին «հայրենիքը» խլել կամեցող բարբարոսներ են, որոնց հետ թուրքը հաշուեյարդար կը տեսնէ ցեղասպանութեամբ: Թուրքիոյ խղճին ծանրացած է (եթէ խի՛ղճ ունի) բազմաթիւ ժողովուրդներու, ազգերու ցեղասպանութեան ոճիրը*» (Բաղդիշեան 27):

Ապա հեղինակը շարունակում է քննել «պետութեան բնաւորութեան» հետեւանքները: Հետաքրքիր է յատկապէս հետեւեալ յիշատակութիւնը. «...*Թուրքիա աշխարհին կը ներկայացուի ինչպիսի՜ անմեղութեամբ, աղաւնակերպ մաքրութեամբ իբրեւ եղբայրութեան ու ժողովրդական կարգերու, օրէնքներու գործադրումի*

դրախտային երկիր մը: Եթէ ալլահը լսէր այս ամէնը, պիտի իջնէ՞ր, վա՜ր պիտի իջնէր՝ ապրելու համար այդ երկրին մէջ: Բայց թուրքը պիտի սպաննէր զայն՝ կարծելով, թէ հայ մըն է, յոյն մը, կիպրացի մը, քիւրտ մը կամ այլազգի մը, որուն իրաւունքները, հայրենի հողն ու ջուրը բռնագրաւած է ինք» (Բաղդիշեան 34):

Բաղդիշեանը հարկ է համարում ընդգծել նաեւ մեծ տէրութիւնների բացթողումները՝ քննադատելով նրանց վերաբերմունքը Թուրքիային սիրաշահելու գործում. «*Մեծ տէրութիւններու ծոցին մէջ տաքցած, օր օրին վրայ մեծցած, հզօրացած Թուրքիան յետագային կը դառնայ այն օձը, որու խայթելէն կը սկսին վախնալ նոյնիսկ նոյն այդ տէրութիւնները: Անոնք եւ ուրիշներ ալ արդէն քաջ կը գիտակցին, թէ մերօրեայ Թուրքիան կրկէսի արենայի այն վարժեցուած գազանն է, որուն հետ զայն վարժեցնող արտիստն անգամ նու՛րբ ու զգու՛շ վարուելու է: Չէ՞ որ, վերջապէս, դիմացինը վայրի բնազդով վայրի մըն է*» (Բաղդիշեան 37-38):

Էթնօծագումը տեւական եւ բարդ գործընթաց է, եւ որեւէ ազգի հոգեկերտուածքի ու բնաւորութեան մէջ փոփոխութիւնների համար մի քանի տասնամեակն անգամ ընդամէնը վայրկեան է, եւ այդ կարճ ժամանակահատուածում ազգի կերպարի մէջ կտրուկ փոփոխութիւններ ակնկալելն առնուազն միամտութիւն է, յատկապէս եթէ էթնօքաղաքական ընդհանուր միտումների, նպատակադրումների եւ դիրքորոշումների մէջ որեւէ շրջադարձային փոփոխութիւն չի գրանցուել: «Թուրքը փոխուել է» դիրքորոշումն ընդամէնը ինքնախաբէութիւն է, իրականութեան ժխտման վրայ հիմնուած հոգեբանական ինքնապաշտպանական բարդոյթ, ցանկալին իրական համարելու պարզունակ մղում (Նալչաջեան 347):

Բաղդիշեանը, հետազօտելով Թուրքիայի պատմութիւնն ու թուրք ժողովրդի էութիւնը, այսպէս է մեկնաբանում. «*Թուրքիան թու՛րք ալ պիտի մնայ եւ ա՛լ աւելի պիտի յղփանայ այնքան ժամանակ, որքան ատեն որ զայն պիտի սիրաշահին, շփացնեն հին ու նոր հզօր կամ արբանեակ թոյլ պետութիւնները՝ անորմէ (եւ նաեւ անոր միջոցով) իրենց համար նախ քաղաքական, ապա եւ՝ տնտեսական առաւելագոյն շահ ապահովելու համար*» (Բաղդիշեան 45):

Բարձրացնելով հետեւեալ հարցադրումը, թէ «ինչո՞ւ պէտք է պատժուին ցեղասպանութեան հեղինակները», Բաղդիշեանը պատասխանում է. «*Հայոց Ցեղասպանութեան դատապարտումն աւելի շատ աշխարհի քաղաքական, բարոյական ու նիւթական շահը պիտի պահանջէ, քան հայունը: Եթէ հայուն համար այն կը նշանակէ Թուրքիոյ հրապարակաւ ներողութիւն խնդրելը եւ, միջազգային օրէնքներուն համաձայն, վնասուց հատուցում, ապա աշխարհին համար այն կը նշանակէ ապահովագրուիլ ցեղասպանութեան վտանգէն: Ասկէ աւելի մեծ օգուտ չի՛ք...*» (Բաղդիշեան 54-55):

Գէորգ Բաղդիշեանի «Հայոց Մեծ եղեռնը մեր յուշերու եւ իրականութեան մէջ: Մուսալեռցի պապս» գիրքն արժանի ներդրում է ոչ միայն սփիւռքահայերի շրջանում, այլեւ Հայոց ցեղասպանութեան թեմայով հետաքրքրվող ընթերցող լայն շրջանակների համար:

Թեհմինէ Մարտոյեան
Հայոց Ցեղասպանութեան զոհերի ու վերապրողների փաստագրման եւ ուսումնասիրութեան բաժնի աւագ գիտաշխատող,
Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտ
tehminemartoyan@gmail.com
ORCID: 0009-0000-2900-7159

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

1. Գէորգ Բաղդիշեան, *Հայոց Մեծ եղեռնը մեր յուշերու եւ իրականութեան մէջ: Մուսալեռցի պապս*, Սրբոց Յակոբեանց տպարան, Երուսաղէմ, 2001:
2. *Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնները. 1918 թուականից մինչեւ մեր օրերը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2017:
3. Կարինե Նալչաջեան, *Ցեղասպանութիւնը՝ Որպէս Հոգեբանական Ֆենոմէն, Հայոց Մեծ եղեռն-90, Յօդուածների Ժողովածու*, պատասխանատու խմբագիր՝ Արամ Սիմոնեան, ԵՊՀ, Երեւան, 2005:

WORKS CITED

1. Baghdishyan, Gevorg. *Hayots' Mets' Eghernë mer yusheru ev irakanutyan mej. Musalerts'I paps*. Erusaghem, [*The Armenian Genocide in Our History and Geality. My grandfather from Musaler*, Jerusalem] 2001. (In Armenian).
2. *Hayreniq-Spyurq haraberutyunnerë. 1918 tvakanic minchev mer orerë*. Erevan, [*Homeland-Diaspora Relations: From 1918 to the date*, Yerevan] 2017. (In Armenian).
3. Nalchajyan, Karine. "*Ceghaspanutyunë vorpes hogebanakan fenomen*". Erevan, ["*Genocide as a Psychological Phenomenon", Armenian Mets Yeghern-90, Collection of articles*, Yerevan] 2005. (In Armenian).